ԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIX դարի 70-80-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ծավալված հակասուլթանական շարժումներն արդյունք էին հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող վերջ չունեցող սանձարձակ կամայականությունների, բռնությունների, հալածանքների: Դրանք միաժամանակ արդյունք էին ազգային ինքնագիտակցության վերելքի:

Թուրքական մակաբույծ պետական բյուրոկրատիան դարեր շարունակ հպատակ ժողովուրդների նկատմամբ հանդես է եկել և՛ սոցիալական հարստահարիչի, և՛ ազգային ճնշման մարմնավորողի դերում: Բնականաբար, նրա դեմ ուղղված սոցիալական ընդվզումները, գյուղացիական հուզումներն ավանդաբար ազգային ներհակության, ազգային պայքարի երանգ էին ստանում: Ժամանակի հայ առաջավոր միտքը սուլթանական բռնապետության դեմ ծավալվող ժողովրդական ընդվզումները դիտում էր ոչ որպես նեղ ազգային կռիվ, այլ որպես սոցիալական խոր արմատներ ունեցող պայքար, որը լայն դեմոկրատական, հակաֆեոդալական խնդիրներ ուներ լուծելու:

Ազգային պայքարի գաղափարախոսները ժողովրդի, և հատկապես նրա աշխատավոր մասի շահերը խորապես գիտակցող հասարակական գործիչներ էին: Նրանց կողմից առաջադրված հարցադրումներն ու ծրագրերն իրենց օբյեկտիվ բովանդակությամբ բուրժուադեմոկրատական պահանջներ էին: Նրանք, փաստորեն, մշակեցին ազգային ազատագրության ռազմավարական ծրագիրը, որտեղ այլ հարցերի հետ մեկտեղ առանձնահատուկ ուշադրություն դարձրին ազգային տնտեսության խնդիրը:

Ազգի մտածողները պաշտպանեցին այն տեսակետը, թե ազգային ազատագրական շարժման ելակետը, նրա հիմնական պահանջը պետք է լինի տնտեսական հարցը, իսկ ավելի որոշակի՝ հողային հարցի լուծումը հօգուտ գյուղացիների: Այս սկզբունքն ուղղակի ազդակ ուներ Միքայել Նալբանդյանից: Արևմտահայ առաջավոր պարբերականներից մեկը՝ «Արևելյան մամուլը» որոշակիորեն ձևակերպեց, որ շատ երկրներում «տնտեսական խնդրո մ'առթիվ ժողովուրդներ ոտի ելած և իրենց անկախության տիրացած են»[1]:

[1] «Արևելյան Մամուլ», 1879, սեպտեմբեր, էջ 201:

Պատմական այս շրջանի հայ դեմոկրատական ուժերի կողմից առաջադրվող խնդիրները նպատակ ունեին վերացնել ֆեոդալական արտադրահարաբերություններն ու ազգային ճնշումը: Դա նպաստավոր պայմաններ կստեղծեր հայ ժողովրդի նյութական բարեկեցության և հասարակական – քաղաքական հետագա վերելքի համար: Կարևորվեց ազգային էկոնոմիկայի զարգացումը, որը կլիներ ազգի կազմավորման նյութական խարիսխը: Այս հարցում միակարծիք էին ազատագրական պայքարի գաղափարախոսության և՛ արմատական և՛ լիբերալ թևերը: Հայ առաջավոր մտածողները միանգամայն իրավացի այն կարծիքին էին, որ ազգի պահպանման և ինքնապաշտպանության երաշխիք կարող է լինել կայուն տնտեսական բազան, առանց որի ազգը կարող է կործանվել կամ ձուլվել օտար զորեղ ուժին: Այնինչ, հայ ազգային կապիտալն ավելի շատ աճում էր լայնությամբ, քան խորությամբ: Եվ դա ուներ իր օբյեկտիվ պատճառները: Խորությամբ աճելու հնարավորությունները երկրում սահմանափակ էին, չկային ապրանքադրամային հարաբերությունների զարգացման ամենակարևոր պայմանները՝ սեփականության անձեռնմխելիությունը և զարգացած ներքին շուկան: Իրավ է, լայնությամբ զարգանալով հայ կապիտալը հզորանում և կարևոր արտաքին կապեր էր ստեղծում: Սակայն հայ մտավորականներից շատերն էին ուշադրություն հրավիրում այն բանին, որ գաղթած հայերի, կամ ավելի ճիշտ՝ հայրենիքից դուրս ապրող հայերի ունեցվածքը չի կարելի ազգային հարստություն համարել: «Եթե ամփոփենք ազգային նյութական հարստության ցիրուցան մասունքը, - գրում է Մ.Մամուրյանը, - պիտի գտնենք հող, դրամ, շենք, գործիք, գործարան, վաճառք դուրս թողլով այն ամեն քաղաքաշեն շինությունները, ճամփաները, ջրանցքները, թանգարանները, երկաթուղիները և այլն, որոց բարիքը թեև քիչ – շատ կվայելեն հայք իրենց գաղթած երկիրներուն մեջ, բայց որովհետև այն երկիրներուն տերերը չեն, և ոչ իսկ Հայաստանի մեջ, բնապես ազգային հարստության ցուցակին մեջ չեն մտներ»[2]: Մամուրյանն առաջարկում էր հայ ունևորներին արդյունավետ օգտագործել դրամագլուխը և այն ներդնել ազգային տնտեսության մեջ և դրանով նպաստել վերջինիս զարգացմանը: Սա չափազանց կարևոր էր ոչ միայն ազգային տնտեսության վերելքի, այլ նաև աշխատանքի շուկայի ստեղծման առումով: «...Քանի քանի ազգային տաճարներ, եկեղեցիներ, վանքեր, քանի քանի ապարաններ ու հարստություններ կրնամ հիշել, որոց մեջ միայն մեր սնափառության ճարակ տվող հարստություններ ու դրամագլուխներ անգործ կմնան... Կհարցնենք, - շարունակում է Մամուրյանը, - թե խոհեմությու՞ն է, իմաստությու՞ն է պահել այնքան գանձեր

[2] «Արևելյան մամուլ», 1879, մարտ, էջ 428:

անգործ ու անարդյուն և դյուրավ կողոպտվելու վիճակին մեջ, մինչդեռ Հայաստանի ամեն կողմ նյութական ու մտավորական թշվառություն կտիրե... մենք հարստության մեջ կմուրանք»[3]: Այլ կերպ ասած, առաջարկվում էր դրամական կապիտալը վերածել արտադրողական կապիտալի: Հարստությունը անարդյունք շռայլող մարդիկ, ըստ Մամուրյանի, հասարակական ինչ դիրք էլ որ ունենան «ազգային կենաց հետ հարաբերություն չեն կրնար ունենալ և իրենց դրամագլխով ազգային շրջանեն դուրս կհամարվին»[4]: Չեր կարող ազգի քաղաքական միավորման և ազգի ձևավորման մասին խոսք լինել առանց տնտեսական նախադրյալների: Դա հասարակական պահանջ էր: Իսկ «Արևելյան մամուլը» որոշակիորեն ձևակերպեց իր տեսակետը՝ «ազգային հարստության ճամփան կարող է նաև տանել դեպի ազատություն»[5]:

Ազգային էկոնոմիկայի զարգացումը կապված է կապիտալիզմի տնտեսական կառուցվածքի հետ: Եվ հենց այդ էկոնոմիկան հիմքն էր այն պայքարի, որը մղում էր անկախության ձգտող ազգային բուրժուազիան օտար լծի և ավատատիրության դեմ: Բայց միաժամանակ այդ պայքարն արտահայտում էր նաև համազգային շահերը, որովհետև ֆեոդալիզմից և օտար կծից տուժում էր ամբողջ ժողովուրդը: Այն երկրներում, որտեղ կապիտալիզմի զարգացումը դանդաղ էր գնում, այնտեղ բարդանում և դժվարանում էր ժողովրդի ազգային համախմբման պրոցեսը: Տնտեսական գործոնը որոշիչ դեր ուներ կատարելու ժողովրդի համախմբման հարցում, առանց որի անհնար էր ազգի ազատագրությունը: Ահա թե ինչու հայ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության մեջ առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ազգային տնտեսության հարցերին:

Ազգի զարգացման հիմքը տնտեսականն էր համարում նաև Գր. Արծրունին: «Մի ազգի տնտեսական կյանքից է կախված նրա մտավոր և բարոյական կացությունը»[6], - այս համոզմունքն ուներ նա: Պատահական չէր, որ Գր.Արծրունին ուշադրություն էր հրավիրում այն բանին, թե «հարուստ դասակարգը, այսինքն հայ բուրժուազիան, վաղ թե ուշ կհասկանա որ իր «նյութական շահը մինչև անգամ պահանջում է ծաղկեցնել Հայաստանի առուտուրը, արդյունագործությունը, խաշնարածությունը, երկրագործությունը: Սրանք կամ անձամբ կամ իրենց ագենտների միջոցով կարող են հիմնել

---

[3] Նույն տեղում, էջ 431:
[4] Նույն տեղում, փետրվար, էջ 434:
[5] Նույն տեղում, փետրվար, էջ 435:
[6] «Մշակ», 1881, №100:

Հայաստանում գործարաններ, արհեստանոցներ, գնել հողեր, արդյունաբերել բամբակ, ծխախոտ, վաճառահանել բուրդ, մրգեր և այլ հազար ու մի բերքեր»[7]:

Ազգային տնտեսության զարգացման գործում չափազանց կարևոր էր սեփականության իրավունքը և դրա իրավական երաշխիքը: Այս հարցերը հատկապես 70-80-ականներին հանգամանորեն քննարկվում էին «Մշակ», «Արևելյան մամուլ», «Արևելք» և այլ առաջավոր պարբերականների էջերում: Հասարակության զարգացման կենսական պայման է համարում «Արևելյան մամուլը» սեփականության իրավունքը: «Մարդուս մտքին մեջ, - գրում է թերթը, - այնքան հաստատուն է սեփականության իրավանց ճանաչումն ու վայելումի իղձն, որ երբ ի փորձ նկատե, որ ինք կաշխատի և օտար մը կ'վայելե, ինք կգործե և ուրիշ մ'իր գործունեության արգասիքը կ'կոդոպտե, այն մարդն այնուհետև չաշխատիր. այս բավական չէ, եթե ստույգ չլինի որ իր աշխատության արդյունքն որևէ ձևով՝ իր սերունդին պիտի մնա, դարձյալ չաշխատիր... ընկերությունն իր էության մեկ կենսական պայմանը՝ սեփականության իրավունքը բռնաբարած տեսնելով՝ խնայողություն, դրամագլուխ, ճարտարություն, արհեստ, գյուտ, հանճար իսպառ կը դադրին, ասոնց հարակից բարորության հետ»[8]: Այլ կերպ ասած, ըստ հոդվածագրի, սեփականության իրավունքի պաշտպանությունը և աշխատանքի արդյունքի ապահովությունն են ազգի տնտեսական բարգավաճման երաշխիքը: Սեփականության իրավունքը «մարդու բնական իրավունքն» էր համարում թերթը, իսկ այդ իրավունքի երաշխավորը՝ պետությանը: Բայց երբ պետությունը թերանում, կամ արգելքներ է ստեղծում այդ հարցում, ապա՝ «ընկերային մարդ իրավունք կտա իր բնական իրավանց պահպանության գործն ստանձնելու և վերահաս վտանգը գինու զորությամբ վանելու»[9]:

Ազգային տնտեսության հարցին հանգամանորեն անդրադարձել է ազատագրական պայքարի այնպիսի գաղափարախոս, ինչպիսին Ռաֆֆին էր: Ազգի ներուժը բազմակողմանիորեն կարող է դրսևորվել և հանրօգուտ բարիք բերել միայն ազատության պայմաններում: Այս էր Ռաֆֆու համոզմունքը: «Որևիցե ժողովրդի համար ոչինչ բախտավոր ապագա գուշակել չի կարելի, քանի որ նրա ապրուստի պահանջները հաստատուն հիմքերի վրա կայացած չէ, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մաշվում է և կլանվում է մի ուրիշ ավելի զորեղ տարրից»,- գրում է նա, «Տեղեկագիր գավառական հարս-

---

[7] Նույն տեղում, №86:
[8] «Արևելյան մամուլ», 1872, մայիս, էջ 207:
[9] «Արևելյան Մամուլ», 1872, մայիս, էջ 208:

տահարությանց» գրքի վերաբերյալ «Մշակում» տպագրած գրախոսականում[10]: Բայց միաժամանակ Ռաֆֆին գտնում էր, որ դա ամենևին էլ չի նշանակում, թե բոլոր հույսերն ու ծրագրերը պետք է կապել միայն ապագայի հետ կամ էլ անգործության մատնվել: Նա անհրաժեշտ էր համարում, որ անգամ այնպիսի անտանելի և անհնար պայմաններում, որում գտնվում էր հայ ժողովուրդը տվյալ պատմափուլում, ազգի շահերով մտահոգ գործիչները պետք է ծրագրեր մշակեն, ուղիներ առաջադրեն հայ աշխատավորի վիճակը ինչ-որ չափով բարելավելու և ծուլման վտանգին դիմակայելու համար: Ռաֆֆին հույս ուներ, որ Հայաստանի տնտեսական զարգացումը, ժողովրդի լուսավորությունը, նորաստեղծ մտավորականության եռանդուն գործունեությունը, նոր տեխնիկայի գործադրումը, երկրի ծայրամասերը կենտրոնի հետ կապելը հնարավոր կդարձնեին ոտքի հանել դարերով նիրհած, բայց արդեն արթնացող հայ ժողովրդին: Նա խորապես համոզված էր, որ ժողովրդի քաղաքական ազատությունը կարևորագույն խնդիր է, բայց դա իրական կարող է լինել միայն այն դեպքում, եթե լուծվի նաև տնտեսական խնդիրը: Ընդ որում, Ռաֆֆին գտնում էր, որ առանձին բարենորոգումները կամ նվիրատվությունները ոչնչով չեն կարող փոխել իրերի դրությունը, և որ դրանք կարող են լինել միայն բարի ցանկություններ: Այլ կերպ ասած, քաղցից և կործանումից փրկելու համար անհրաժեշտ է աշխատավորին տալ այն, ինչը նրա համար կենսականորեն անհրաժեշտ է:

Ազգային էկոնոմիկայի զարգացման հարցում Ռաֆֆին կարևոր էր համարում ոչ թե առևտուրը, այլ՝ հողագործությունը: Այս տեսակետը թեև միակողմանի, բայց առաջադիմական էր այն իմաստով, որ «տնտեսական հարցի» լուծման ծանրության կենտրոնը շրջանառության ոլորտից փոխադրում էր արտադրության ոլորտ: Ռաֆֆին իրավամբ գտնում էր, որ շրջանառությունը, առևտուրը, ինքնին, չեն կարող լինել հարստության աղբյուր, եթե երկրի ներսում զարգացած չլինի արդյունաբերությունը: Եվ միայն զարգացած արտադրության դեպքում գյուղատնտեսական և արդյունաբերական արդյունքի արտահանումը հնարավորություն կտա շահույթ ակնկալել:

Ռաֆֆու կարծիքով, տնտեսական խնդրի բանալին ագրարային հարցն է, և արտադրության բոլոր միջոցների մեջ հողը ամենահիմնականն է: «...Մի ազգի, յուր գոյությունը պահպանելու գլխավոր պայմաններից մեկը հողն է և նրա մշակությունը, - գրում էր նա «Նամակ Կ.Պոլսից» հոդվածում: - Թե մի ազգ, որ յուր կյանքի պահպանությունը չէ հիմնած հողի արդյունաբերության վերա,

---

[10] Տե՛ս «Մշակ», 1878, №149:

նա ոչ միայն երկար ապրել կարող չէ, այլև չէ կարող ազգ համարվել»[11]: Այս տեսակետի հիմքում ընկած էր այն իրողությունը, որ Հայաստանը ագրարային երկիր էր և նման կոնցեպցիան արտահայտում էր գյուղացու շահերը: Դա կարող էր լիցքավորել ազգային - ազատագրական շարժման մեջ ընդգրկված և նրա հիմնական շարժիչ ուժը կազմող գյուղացիական զանգվածներին:

Ռաֆֆին գտնում էր, որ հողը բնության պարգև է և այն պետք է լինի աշխատավորի սեփականությունը: Հողի աշխատավորը պետք է ապահովված լինի հողով: Նա դեմ էր վերջինիս խոշոր ֆեոդալական սեփականությանը: Չէր Բացառում հողի համայնական սեփականության ձևը: Սակայն, ըստ նրա, համայնական հողատիրությունը այն բանի համար չէ, որպեսզի դրանով պահպանվեն ֆեոդալիզմի մնացորդները, այլ նրա համար, որպեսզի հողագործությունը առաջավոր հիմունքների վրա դրվի, երկրագործական ընկերություններ կազմակերպվեն և այդ ձևով զարկ տրվի գյուղատնտեսության զարգացմանը: Այս տեսակետը նա գեղարվեստորեն պատկերել է »Կայծերի« վերջին գլխում:

Ռաֆֆին պաշտպանում էր հողի գյուղացիական մասնավոր սեփականության իրավունքը: Նա գյուղացուն հողը օտարելու իրավունք էր վերապահում: «...Հային իր հայրենի երկրի հետ կապելու համար, գաղթականությունը դադարեցնելու համար, միակ և ամենակարևոր միջոցն է նրան իրավունք տալ ազատ կալվածատեր լինելու, որ նա, որպես սեփականություն իր հողն ունենա և նրանից ամեն կերպով օգտվելու իրավունք ունենա, - գրում է Ռաֆֆին, - Դրանով կարելի է միայն հնար տալ գյուղացուն իր աշխատությամբ ապրուստը հայթայթելու: Նա չպիտի լինի վարձակալ, այլ հողը պիտի լինի նրա համար մի հաստատուն ժառանգություն, որ անցնում է սերնդից սերունդ, որը նա կարող է գնել, վաճառել, գրավ դնել, մի խոսքով, վարվել նրա հետ որպես իրան պատկանող սեփականության հետ»[12]: Հողի սեփականության իրավունքի նման ըմբռնումը ուղղված էր հողի ֆեոդալական խոշոր սեփականության դեմ և նման ծրագրի իրականացումը գյուղում նոր արտադրահարաբերությունների առաջնորդիչ խթան կարող էր հանդիսանալ:

Հողային հարցի լուծման Ռաֆֆու առաջադրած ծրագիրը ժամանակի ամենաառաջավոր տեսակետն էր: Հողի մասնավոր սեփականության իրավունքը կվերացներ ավատատիրական սեփականության հիմքի վրա խարսխված մարդկանց անձնական կախվածությունը և պայմաններ կստեղծեր, որ աշխատանքը դառնա հասարակական պրոցես: Մի բան, որը չափազանց կարևոր էր

---

[11] «Մշակ», 1873, №10:
[12] «Մշակ», 1878, №162:

ազգի գենեզիսի համար: Միաժամանակ այն թափ կհաղորդեր ապրանքա - դրամական հարաբերությունների զարգացմանը և տնտեսության բնատնտեսական ձևի արագ քայքայմանն ու ներքին շուկայի ստեղծմանը: Իսկ զարգացած ներքին շուկան հենց ազգային տնտեսության հիմքն է: Այսպիսով Ռաֆֆու առաջադրած ագրարային հարցի լուծման կոնցեպցիան մեծապես կնպաստեր ազգային տնտեսության զարգացմանը:

1878թ. Ազգային ժողովի հուլիսի 21-ի նիստում Ներսես Վարժապետյանի պատմական ելույթից անմիջապես հետո՝ նույն թվականի օգոստոսին Ղալաթիայում կազմակերպվեց «շատ անվանի ազգայինների» հավաք, որը նախագահում էր հենց ինքը՝ պատրիարք Ներսես Վարժապետյանը: Հավաքի հիմնական նպատակն էր ուղիներ փնտրել Արևմտյան Հայաստանի տնտեսության զարգացման հարցում: Հավաքին մասնակցում էին Հայաստանի տարբեր շրջաններից ներկայացուցիչներ: Վանեցիներն առաջարկեցին, որ «... պզտի ընկերություն մը կազմվի և Վանա ծովակին ջրափնյա գյուղերն ու քաղաքները երթևեկելու և առևտրի կենդանություն տալու համար կրակ և շոգի գործանե»[13]: Խոսքը Վանա լճի վրա շոգենավեր կառուցելու, դրանով լճի և շրջակա գյուղերն ու քաղաքները ակտիվ կյանքի մեջ ներքաշելու մասին էր: Երկրագործությանը զարկ տալու համար առաջ քաշվեց ջրանցքների կառուցման մի քանի ծրագրեր: Այս հարցում հատկապես ակտիվ էր հայ հասարակական գործիչ Մարկոս Աղաբեկյանը, որը Հայաստանի փրկությունը ջրանցքների կառուցման մեջ էր տեսնում: Նա հանգամանորեն ուսումնասիրել էր Արևմտյան Հայաստանի բնակլիմայական պայմանները, գյուղերի և քաղաքների տեղանքը, մշակել հողատարածքները և այս բոլորի հիման վրա ներկայացնել ջրանցքների կառուցման իր ծրագիրը: Ըստ նրա ծրագրի կարելի էր Եփրատի, Տիգրիսի, Երասխի, Ճորոխի ջրերն իրար միացնել ջրանցքներով և Հայաստանը հարավից՝ Պարսից ծովին, հյուսիսից՝ Սև ծովին կապել ջրային ճանապարհով[14]: Սա անշուշտ Հայաստանի տնտեսությանն ու առևտրին մեծ խթան կլիներ և կնպաստեր ներքին շուկայի ակտիվացմանը: Սակայն, նման ծրագրի իրականացումը հսկայական գումարների հետ էր կապված և այն հասկանալի էր, որ մնաց որպես բարի ցանկություն:

Երկրի տնտեսական զարգացման և ներքին շուկայի ընդլայնման գործում հայ առաջավոր մտածողները՝ Ռաֆֆին, Գր. Արծրունին, Մ.Մամուրյանը և շատ ուրիշներ առանձնահատուկ տեղ էին տալիս երկաթուղային շինա-

---

[13] «Արևելյան մամուլ», 1878, օգոստոս, էջ 159:
[14] Նույն տեղում, էջ 160:

ռարության հարցին: Աշխատավոր գյուղացու շահերից ելնելով, որը երկրագործական արտադրանքն իրացնել չէր կարողանում նաև վաճառահանման շուկաների հեռու լինելու պատճառով, Ռաֆֆին «Կ.Պոլսի մտածողներից» պահանջում էր բարձրացնել «...Տրապիզոնից Արզերում, այնտեղից Վան, Վանից Մուշ, մինչև Մոսուլ և Բաղդադ երկաթուղի շինելու» հարցը[15]: Այլ կերպ ասած, Ռաֆֆին անհրաժեշտ էր համարում արտադրության և վաճառահանման ճիշտ և արդյունավետ կազմակերպումը:

Արծրունին կարևոր նշանակություն էր տալիս գյուղական բնակչության համար էժան վարկի կազմակերպմանը: Դրա անհրաժեշտությունը հիմնավորում էր վաշխառուական կապիտալի բարձր, ստրկացուցիչ տոկոսների առկայության փաստով: Նա ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքին, որ վաշխառուական կապիտալը արգելակում է արտադրողական ուժերի զարգացումը գյուղատնտեսության մեջ, դժվարացնելով նոր, առաջադիմական հարաբերությունների ծավալումը գյուղում: Դրա համար նա, ինչպես նաև Ռաֆֆին, միջոցներ էին առաջարկում վերացնելու վարկի մինչկապիտալիստական ձևերը՝ նոր, ավելի էժան բանկային վարկային ընկերությունների ստեղծման միջոցով: Նշելով, որ ժողովրդի ստորին, աշխատող դասը՝ երկրագործը և արհեստավորը հասարակության հիմքն ու տնտեսական ուժն են կազմում, Արծրունին գրում էր, - «...մենք պիտի մտածենք հիմնել և հասարակության արդյունավոր, աշխատող դասի համար այնպիսի ընկերություններ, որոնք ներկայացնելով էժան կրեդիտը, ազատեին նրանց վաշխառուների ձեռքից, որոնցից կախված է նրանց ամբողջ տնտեսական դրությունը»[16]:

Ռաֆֆին համոզված էր, որ ազգային էկոնոմիկայի վերելքը կարող է նպաստել համազգային բարօրությանը: Անշուշտ նա իրավացի էր այն իմաստով, որ տնտեսական այս ծրագրերը, էությամբ լինելով բուրժուական, խիստ անհրաժեշտ էին հայ գյուղացիությանը, նոր ձևավորվող բանվոր դասակարգին, պանդուխտ մշակներին, օրավարձու աշխատողներին: Նման ծրագրի իրականացումը նրանց համար կարող էր բաց անել դեմոկրատական զարգացման համեմատաբար լայն հեռանկարներ:

Անշուշտ, տնտեսական այս խնդիրները, որոնք առաջադրում էին ժամանակի առաջադեմ մտավորականները, դեռևս հայ աշխատավորին չէին դարձնի իր երկրի և աշխատանքի տերը, սակայն դրանց իրականացումը նրանց համար մի մեծ առաջընթաց կլիներ լիակատար և վերջնական ազատագրման համար մղվող պայքարում, մեծ խթան՝ ազգային առաջադիմությանը:

---

[15] Տե՛ս «Մշակ», 1876, №14:
[16] Նույն տեղում, №10: